



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«**ԲՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ**
ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

« 01 » 04 2014 թ

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԲՓ 21

Տրված է՝

«**Տիեռաս դե Արմենիա**» ՓԲԸ

ք. Երևան, Ջվարթնոց միջազգային
օդանավակայաններ ԱՄՕ շենք

Գործունեությունը՝

Արևադաշտ համայնքում գործող գինու գործարանի
վերազինման աշխատանքային նախագծի վերաբերյալ

«Արմավիր»

Տնօրեն՝



Ա. Գևորգյան

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 21

«01» 04 2014թ.

«Տիեռաս դե Արմենիա» ՓԲԸ կողմից ներկայացված ՀՀ Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքում գործող գինու գործարանի վերազինման աշխատանքային նախագծի վերաբերյալ

Պատվիրատու՝	«Տիեռաս դե Արմենիա» ՓԲԸ
Նախագծող՝	«Էկո Առողիս» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Աշխատանքային նախագիծ
Լիազորված անձ՝	Կ. Հակոբյան
Տեղադրման վայրը՝	ՀՀ Արմավիրի մարզ, Արևադաշտ համայնք

Համաձայն ներկայացված աշխատանքային նախագծի «Տիեռաս դե Արմենիա» ՓԲԸ ընկերությունը նախատեսում է ՀՀ Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքում գտնվող գինու գործարանի վերազինում: Վերազինման ընթացքում նախատեսվում է գործարանի շենքի վերակառուցում, GAI 1306W և GAI 9213W մակնիշի շշալցման հոսքագծերի և Unical ellprex 340 մակնիշի ջրաջեռուցիչ կաթսայի տեղադրում:

Արմավիրի մարզի, Արևադաշտ համայնքում «Տիեռաս դե Արմենիա» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող տարածքի մակերեսը կազմում է 2301 հա:

Գործարանի արտադրական հզորությունը վերազինումից հետո կազմելու է 120.000 դալ գինենյութ: Գործարանի կազմի մեջ մտնում են՝

- հումքի ընդունման և ճզման հանգույցը,
- թորման արտադրամասը՝ տեղադրված մշակման տարողությունների ծավալը վերազինումից հետո կկազմի՝ 9800 հալ;
- շշալցման հանգույցը,
- մեխանիկական սենյակը (կաթսայատուն, ջրի ֆիլտրացման համակարգ, հովացման համակարգ),
- ճաշարան,
- էլեկտրական սենյակը:

Գործարանի վերազինման փուլում մթնոլորտի վրա ազդեցությունը կապված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընացքում առաջացող արտանետումներով:

Շինարարական աշխատանքները կրում են ժամանակավոր բնույթ և չունեն զգալի ազդեցություն:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում ազդեցությունը մեղմելու համար անհրաժեշտ է՝

- շինարարական օբյեկտը ծածկել համապատասխան բարձրություն ունեցող անբավանց թաղանթով,

սրբազան բերք



- շինհրապարակից դուրս եկող մեքենանարի անվադողերը լվանալ,
- պարտադիր կարգով ավազը ցեմենտը, գաջը, խիճը և շինարարական աղբը տեղափոխել անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով,
- շինհրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել,
- հղկման աշխատանքներ իրականացնելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ,
- սորուն նյութերը (ավազ, գաջ, ցեմենտ) պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,
- շինարարական աղբը տեղափոխել միայն հատկացված վայրեր:

Գործարանի շահագործման ժամանակ մթնոլորտի վրա ազդեցությունը պայմանավորված է էթիլ սպիրտի արտանետումներով (տեխնոլոգիական գործընթացից) և ջեռուցման համակարգի աշխատանքից բնական գազի այրման արդյունքում առաջացող վնասակար նյութերի արտանետումներով: Կաթսաները շահագործվելու են բնական գազով՝ պահեստային վառելիք չի նախատեսվում:

Արտանետվող վնասակար նյութերի մթնոլորտում ցրման հաշվարկները կատարվել են համակարգչային «Ռ-ադուգա» ծրագրով:

Համաձայն վնասակար նյութերի արտանետումների մթնոլորտում ցրման հաշվարկների սպասվելիք մերձգետնյա կոնցենտրացիաները գտնվում են թույլարտելի նորմերի սահմաններում:

Գործարանի շահագործման ընթացքում մթնոլորտ է արտանետվում՝ էթիլ սպիրտ 0.75տ/տարի, ազոտի օքսիդ՝ 1.02 տ/տարի, ածխածնի օքսիդ՝ 3.2 տ/տարի:

Գինու գործարանում խաղողի ճգման ընթացքում կառաջանա խաղողի չանջ 2500տ/տարի, որը կօգտագործվի որպես պարարտանյութ խաղողի այգիներում:

Ընկերության ջրամատակարարումը իրականացվելու է քաղաքային ջրամատակարարման ցանցից և խորքային հորից: Արտադրական հոսքաջրերը ֆիլտրացիայից հետո կկուտակվեն տարողությունում և կօգտագործվեն ոռոգման նպատակով: Տնտեսակենցաղային հոսքաջրերը 610խմ/տարի ծավալով կհավաքվեն անջրթափանց սեպտիկ հորում, որից հետո մեքենաներով կտեղափոխվի կոյուղու մոտակա ցանց:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ



«Տիեռաս դե Արմենիա» ՓԲԸ կողմից ներկայացված ՀՀ Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքում գործող գինու գործարանի վերազինման աշխատանքային նախագծի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Փոխանօրենի՝

Փորձագետ՝



Հ. Գրիգորյան

Ա. Մինասյան